Քննարկվել և հավանության է արժանացել
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի
«31» 08 2022թ. № 02 նիստում

Հաստատվել է՝
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կոլեգիալ կառավարման խորհրդի «31» 08 2022թ.
N 2-22 նիստում, նախագահ՝ _____ Ս.Դավիդյան
/ստորագրություն/

ՀՀ ԿԳՄՍՆ «ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ–Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում են Չարենցավանի պետական քոլեջի (այսուհետ՝ ՉՊՔ) ուսանողների կողմից ներկայացված բողբոքների ընդունման, քննարկման և ամփոփման հիմնադրույթները:

1.2. Սույն կարգի դրույթները տարածվում են ՉՊՔ կրթական բոլոր ծրագրերով ուսումնառվող ուսանողների վրա:

1.3. Ուսանողը կարող է բողոքարկել գիտելիքների գնահատման արդյունքները, քննությունից (ստուգարքից) ստացած գնահատականը ամբիոնների և քոլեջային հանձնաժողովներին, որոնք կազմավորում է ՉՊՔ տնօրենը:

1.4. Քոլեջային հանձնաժողովի կազմի մեջ մտնում են՝

ա) տնօրենը (նախագահ),

բ) ուսումնական գծով փոխտնօրենը (տեղակալ),

գ) համապատասխան ամբիոնի վարիչը,

դ) ՉՊՔ ուսխորհրդի նախագահը:

1.5. Ամբիոնի հանձնաժողովի կազմի մեջ մտնում են՝

ա) համապատասխան ամբիոնի վարիչը,

բ) քննող դասախոսը:

1.6. Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովներում կարող են ընդգրկվել համապատասխան ոլորտի մասնագետներ:

2. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Կիսամյակային գիտելիքների գնահատման արդյունքները, ինչպես նաև քննաշրջանում և բաց դռների ժամանակահատվածում քննությունից (ստուգարքից) ստացած անբավարար կամ գիտելիքներին ոչ համապատասխան գնահատականը, ուսանողի գրավոր դիմումի համաձայն բողոքարկվում է ամբիոնի հանձնաժողովում՝ արդյունքները հրապարակվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

2.2. Եթե ուսանողը քննությունը հանձնել է գրավոր, ապա հանձնաժողովը ստուգում է ուսանողի գրավոր աշխատանքի գնահատման համապատասխանությունը սահմանված չափանիշներին:

2.3. Եթե ուսանողը քննությունը հանձնել է բանավոր, ապա հանձնաժողովը ուսանողի գիտելիքները ստուգում է տվյալ առարկայի ծրագրի ամբողջ ծավալով:

2.4. Գիտելիքների գնահատման արդյունքները հանձնաժողովը ստուգում է այն մասով, որն ուսանողը բողոքարկում է:

2.5. Ամբիոնի հանձնաժողովը մեկ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է բողոքարկումը և կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝

ա) քննական գնահատականը (ստուգարքի արդյունքները) մնում է անփոփոխ,

բ) քննական գնահատականը (ստուգարքի արդյունքները) փոփոխվում է (գնահատականը բարձրացվում է կամ՝ իջեցվում):

2.6. Բողոքարկման արդյունքը կարող է կրկնակի բողոքարկվել քոլեջային հանձնաժողովում՝ ամբիոնի հանձնաժողովի եզրակացությունից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

2.7. Ուսանողի գիտելիքների գնահատման բողոքը քննարկվում է քոլեջային հանձնաժողովի կողմից նաև այն դեպքում, երբ տվյալ դասընթացը դասավանդող դասախոսը համապատասխան ամբիոնի վարիչն է:

2.8. Քոլեջային հանձնաժողովը երեք աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է բողոքարկումը և կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝

ա) քննական գնահատականը (ստուգարքի արդյունքները) մնում է անփոփոխ,

բ) քննական գնահատականը (ստուգարքի արդյունքները) փոփոխվում է (գնահատականը բարձրացվում է կամ՝ իջեցվում):

2.9. Քոլեջային հանձնաժողովի որոշումը վերջնական է:

2.10. Գիտելիքների գնահատման կամ ակադեմիական պարտքերի երկրորդ լուծարքի հանձնման արդյունքների հիման վրա (անբավարար առաջադիմության հիմքով) ՉՊՔ-ից ուսանողի հեռացման մասին ուսումնական մասի կողմից ներկայացված զեկուցագիրը կարող է բողոքարկվել ՉՊՔ քոլեջային հանձնաժողովին՝ զեկուցագիրը ՉՊՔի տնօրենին հանձնելու պահից երկու աշխատանքային օրերի ընթացքում:

2.11. Քոլեջային հանձնաժողովը, մեկ աշխատանքային օրվա ընթացքում, քննարկելով բողոքարկումը (ուսանողի ցանկության դեպքում՝ նրա ներկայությամբ)՝ կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) բավարարել բողոքը և անվավեր ճանաչել ուսանողի հեռացման մասին տնօրենի հրամանի նախագիծը,

բ) մերժել բողոքը և ուսանողի հեռացման մասին տնօրենի հրամանը թողնել ուժի մեջ:

3. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄԸ

3.1. Բողոքարկման հանձնաժողովները կազմում են գրավոր արձանագրություններ, որոնք կցվում են քննական կամ ստուգարքային տեղեկագրերին: Գնահատականի փոփոխման դեպքում քննական տեղեկագրում և ստուգարքային գրքույկում կատարվում է համապատասխան գրառում:

3.2. Բողոքարկման արդյունքների մասին ամբիոնի հանձնաժողովի նախագահը զեկուցում է ՉՊՔի տնօրենին: